

## Ռայա Սարգսյան

### Միրաք գՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՉՏՆՎԱԾ ԶԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ

**Քանալի բառեր-** Միրաք, եկեղեցի, պեղումներ, խաչքար, ծիթաճրագ, բանասացներ, դաշտային նյութ, ճրագ նվիրելու ծես:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միրաքի հնագիտական արշավախումբը<sup>1</sup> (ղեկավար՝ պ. գ. թ. Գագիկ Գ. Սարգսյան) 2012-13 թթ. ՀՀ Արագածոտնի մարզի Միրաք գյուղի միանավ բազիլիկ եկեղեցուն իրականացրեց հնագիտական պեղումներ: Աշխատանքների ընթացքում, ի թիվս քարեղեն ու խեցեղեն տարաբնույթ գտածոների, հնագետները եկեղեցու բեմից (հիմնականում մի մեծ քարի տակից) հայտնաբերել են երկու տասնյակից ավելի ջնարակապատ և անջնարակ կավե ծիթաճրագներ<sup>2</sup>:

Միրաք եզրիաբնակ գյուղը գտնվում է Ապարան քաղաքից մոտ 10 կմ հյուսիս, որի վերջնամասում պեղված հուշարձանն է: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ եկեղեցին ներգծված աբսիդով միանավ բազիլիկ կառույց է<sup>3</sup>, որի վերաբերյալ տեղեկությունները խիստ կցկտուր են: Այն կառուցված է հիմնականում սև և դեղնավուն տուֆից: Կառույցի արևելյան աբսիդը, արևելյան ու հարավային պատերի վերին քարաշարի հատվածները և հարավային մուտքի բացվածքի վերին մասը տեսանելի են եղել մինչև պեղումները: Եկեղեցու մնացած մասը ծածկված էր 2-2,5 մ հողաշերտով<sup>4</sup>: Պեղումների ընթացքում ի հայտ եկած քարեղեն գտածոներից առանձնանում են 12-13-րդ դդ. թվագրվող գրեթե ամբողջական երեք խաչքարերը<sup>5</sup>, 9-10-րդ դդ. թվագրվող երկու խաչքարերի բեկորները<sup>6</sup>, քառանիստ կոթողի բեկորային քանդակագարդ հատվածները<sup>7</sup> և այլն: Իսկ խեցեղեն նյութը հիմնականում բերկորային է. դրանք հասարակ խոհանոցային անոթներ են՝ կարասներ, կճուճներ, թասեր, քրեղաններ և այլ առարկաներ<sup>8</sup>:

Հողվածի նպատակն է հնագիտական և դաշտային-ազգագրական նյութերի համադրությամբ ներկայացնել Միրաքի եկեղեցուց գտնված ծիթաճրագների ծիսական և կիրառական նշանակությունը:

Գտնված ճրագներից յոթը ջնարակապատ են, իսկ մնացած տասնյոթը՝ անջնարակ: Բոլորը դասվում են բաց ճրագների տիպին: Սկզբում պատրաստվել է սովորական թաս, ապա քանի դեռ կավը թաց է եղել շուրթի սեղմումով ձևավորվել է քթիկը: Պատրույգի մի ծայրը դրվել է ձեթով կամ այլ վառելանյութով լցված ճրագի մեջ, իսկ մյուս ծայրը դուրս է բերվել քթիկից: Ճրագները ձևով միմյանցից շատ չեն տարբերվում: Նույնատիպությունը փոքր-ինչ խախտվում է իրանից քթիկ անցման հատվածում. մի դեպքում այս անցումն ավելի կտրուկ է, որի շնորհիվ ճրագները եռանկյունաձև տեսք են ընդունել (նկ.1), մեկ այլ դեպքում անցումն ավելի սահուն է, որի արդյունքում ճրագները կլորավուն են դարձել (նկ.2): Խեցին սև է կամ դարչնագույն: Բոլոր ճրագներն ունեն հարթ հատակ, բացառությամբ մեկի, որի հատակն ուռուցիկ է և հարմար չէ հարթ մակերեսի վրա դնելու համար (հավանաբար այն դրվել է ինչ-որ հարմարանքի վրա): Հատակների տրամագիծը տատանվում են 6- 7,5 սմ, իսկ բերանի տրամագիծը՝ 8,5 - 9,5 սմ:

<sup>1</sup> Նյութերը տրամադրելու և գիտական խորհրդատվության համար երախտագիտություն ենք հայտնում արշավախմբի ղեկավար Գագիկ Սարգսյանին:

<sup>2</sup> Տե՛ս Sargsyan G., Harutyunyan A., Excavations of the single-nave church of Mirak, 2012-2013, Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, vol. IX, Issue 1, 2015, p. 183.

<sup>3</sup> Տե՛ս Տեր-Մինասյան Ա., Միանավ բազիլիկներ, «Հայկական ճարտարապետության պատմություն», հ. 2, Ե., 2002, էջ 86: Ա. Տեր-Մինասյանը եկեղեցին թվագրում է 5-6-րդ դարերով: Տե՛ս Տեր-Մինասյան Ա., նշվ. աշխ., էջ 87:

<sup>4</sup> Տե՛ս Sargsyan G., Harutyunyan A., նշվ. աշխ., էջ 178:

<sup>5</sup> Անդ, էջ 180:

<sup>6</sup> Անդ, էջ 182:

<sup>7</sup> Անդ, էջ 182:

<sup>8</sup> Անդ, էջ 182:

Միրաքից գտնված ճրագները ձևով նման են Դվինից<sup>1</sup>, Գառնիից<sup>2</sup> և Արցախի Տիգրանակերտից<sup>3</sup> գտնված նավակածն ձիթաճրագներին: Դատելով արտաքին տեսքից՝ դրանք տնայնագործական իրեր են, այսինքն՝ պատրաստվել են ոչ թե խեցեգործական հատուկ արհեստանոցում, այլ տնային պայմաններում: Կոպտավուն, անհարթ մակերեսը ցույց է տալիս, որ պատրաստված են ձեռքով, կավը մաղված չէ, պարզ երևում են ավազի խոշոր հատիկները, իսկ ճրագների վրայի մանր ձաքերը և խեցու փխրունությունը վկայում են, որ դրանք լավ թրծված չեն:

Ինչ վերաբերում է ջնարակին, ապա այն ներկայանում է հիմնականում կապույտ և կանաչ երանգներով: Գտնված ճրագներից միայն չորսն են ամբողջական, մյուսները մասամբ կոտրված են: Նկատենք, որ ճրագներից մի քանիսը ջնարակվելուց առաջ անգործ են պատվել, որի աղյունքում ավելի լավ որակ և վառ գույն ունեն:

Մենք փորձեցինք ճրագների ծիսական կիրառության գտնվելու հանգամանքների և քանակության վերաբերյալ հավաքել դաշտային ազգագրական նյութ: Քանի որ եզդիները Միրաքում հաստատվել են 19-րդ դարում, և հնարավոր էր՝ նրանց հիշողության մեջ պահպանված կամ ավանդաբար անցած չլինեին ծեսին առնչվող տեղեկություններ. լրացուցիչ դաշտային նյութ ենք հավաքել նաև հայաբնակ Մելիքայուղից:

Մինչ դաշտային նյութին անդրադառնալու, համառոտ ներկայացնենք, թե ներկայումս եկեղեցին ինչպե՞ս է ընկալվում գյուղացիների կողմից և ի՞նչ դեր ունի նրանց առօրյայում: Միրաքում ապրող եզդիները շատ բարյացակամ ու հոգատար վերաբերմունք ունեն հուշարձանի նկատմամբ: Գյուղի բնակիչները հնագիտական պեղումների ժամանակ հրաժարվել են մասնակցել աշխատանքներին՝ համարելով, որ «սուրբը քանդելը մեղք է»: Երիտասարդներից մեկն էլ նշեց, որ եթե անգամ մասնակցեր, ապա կաշխատեր միայն առանց վարձատրության: Բնակիչները տարբերություն չեն դնում քրիստոնեական եկեղեցու և եզդիների սրբի միջև, որը գտնվում է գյուղացիներից մեկի տանը: Երկու վայրերում էլ հավասարապես աղոթում են, մոմ վառում և մատաղ անում: Հետաքրքիր է, որ անձրևաբեր ծեսից հետո<sup>4</sup> եկեղեցում են աղոթում և գոհ մատուցում:

Անդրադառնալով ճրագներին<sup>5</sup> նշենք, որ հնագիտական արշավախմբի ղեկավար Գ. Սարգսյանը կարծում է, որ ճրագների այդքան մեծ քանակությունը նման փոքր կառույցում, հավանաբար, կապվում է եկեղեցուն ճրագ նվիրելու ծեսի հետ<sup>6</sup>: Դաշտային աշխատանքների ընթացքում փորձեցինք պարզել, թե նախկինում եղել կամ ներկայումս կա՞ նման ծես, թե՞ ոչ: Հետաքրքիր էր, որ և՛ Մելիքայուղ և՛ Միրաք գյուղերում բանասացները ճրագների նման քանակությունը բացատրում էին եկեղեցում մոմի փոխարեն ճրագ վառելու հին սովորությամբ: Ըստ բանասացների՝ եկեղեցում վառված ճրագը թողնում էին հատկապես նրանք, ում տանը ճրագ շատ կար, այսինքն՝ «իրենց ճրագն էին տալիս եկեղեցուն»: Մելիքայուղ և Միրաք գյուղերի ամենատարեց բանասացները (82 և 84 տարեկան) հաստատեցին, որ հնում մոմի բացակայության կամ սակավության պատճառով ճրագ էին տանում եկեղեցի և վառելուց հետո թողնում այնտեղ: Հետաքրքիր զուգահեռ անցկացրեցին, որ ինչպես ներկայումս լուցկի են տանում սրբավայրում մոմ վառելու և թողնում, այդպես էլ նախկինում՝ ճրագները: Սրբավայր տարածը նվիրել են սրբին<sup>7</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Քալանթարյան Ա., Դվինի նյութական մշակույթը 4-8-րդ դարերում, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», պր. 5, Ե., 1970, էջ 23:

<sup>2</sup> Տե՛ս Պետրոսյան Հ., Գառնին 9-14-րդ դարերում, Ե., 1988, էջ 62:

<sup>3</sup> Ճրագները ցուցադրված են Արցախի Տիգրանակերտի հնագիտական թանգարանում (դրանց գիտական հրատարակությունն ընթացքի մեջ է):

<sup>4</sup> Տղամարդկանցից մեկը, սովորաբար շեյխը, առավոտյան, առանց որևէ մեկի հետ խոսելու, քար է վերցնում, գցում ջուրը, այնուհետև գալիս է եկեղեցու մոտ աղթում և մատաղ են անում: Ըստ բանասացների՝ նույն կամ հաջորդ օրն անձրև է գալիս:

<sup>5</sup> Ազգագրական նյութերում բազմիցս հիշատակվել է ճրագի խորհրդի և հանգուցյալի հոգու հետ ճրագի կապը (տե՛ս «Մահ , թաղումն և մեռելոց», Ազգագրական հանդես, գիրք Բ., խմբ.՝ Ե. Լալայանի, Թիֆլիս, 1897, էջ 179, «Մահ և թաղումն», Ազգագրական հանդես, գիրք Ե, խմբ.՝ Բենսէի, Թիֆլիս, 1899, էջ 178), որին կանդրադառնանք առանձին հոդվածով:

<sup>6</sup> Sargsyan G., A. Harutyunyan, նշվ. աշխ., էջ 184:

<sup>7</sup> 2015 թ. սեպտեմբերին ԵՊՀ և Ֆլորենցիայի համալսարանների՝ Մետաքսի ճանապարհը հետազոտող համատեղ արշավախմբի կողմից համանման սովորություն վավերացվեց Վայոց ձորի մարզի Հորս գյուղում, որտեղ տեղական

Կարելի է հավաստել, որ թեև դաշտային նյութը հաստատում է եկեղեցուն ճրագ նվիրելու ավանդույթը, սակայն դեռևս միայն վարկածի մակարդակով, իսկ հնագիտական նյութը դժվարություններ է առաջացնում թվագրման և գտնվելու հանգամանքի հարցում: Նախ՝ ճրագների այս տեսակը տարածված է միջնադարի բոլոր շրջափուլերում, երկրորդ՝ չկան բավարար կմականներ, որոնք ցույց կտան, թե եկեղեցին մինչև երբ է գործել, երրորդ՝ ճրագները գտնվել են բեմում ընկած մեծ քարի տակ, որի մակարդակը բեմի ենթադրվող բարձրությունից ցածր է: Այսինքն՝ ճրագներն իրենց տեղում չեն գտնվել, որը թույլ կտար ասել, թե դրվել են բեմի վրա՝ եկեղեցին կամ խորանը լուսավորելու համար կամ օգտագործվել են ծեսերի ժամանակ և այլն: Ուստի հնարավոր վարկած է, որ երբ եկեղեցին չի գործել, դրանք հավաքել են և թաքցրել բեմում:

Այսպիսով՝ ամփոփելով մեր նախնական դիտարկումները Միրաքի ծիթաճրագների ծիսական կիրառության վերաբերյալ, նշենք, որ հնագիտական և ազգագրական նյութերը բավարար չեն լիովին հաստատելու կամ ժխտելու եկեղեցուն ճրագ նվիրելու ծեսը: Այնուամենայնիվ, դաշտային նյութը հստակորեն վկայում է ճրագ նվիրելու, մոմը ճրագով փոխարինելու և այն եկեղեցում թողնելու սովորությունը: Քանի որ ճրագների քննվող տեսակը հանդիպում է նաև զարգացած միջնադարում, և եկեղեցուց գտնված չորս խաչքարերը ևս թվագրվում են այդ ժամանակաշրջանով, ուստի չի բացառվում, որ գտածոները եկեղեցու՝ հիշյալ ժամանակաշրջանին պատկանող առարկաներից են, որոնք օգտագործվել են համապատասխան ծեսերի ընթացքում:

Ուշագրավ է, որ Գեղամա լեռների եզրիական ամառային արոտավայրերից մեկում՝ Զհարաթ լեռան վրա, Ազատի գետահովտի պատմամշակութային միջավայրը հետազոտող հայ-իտալական արշավախումբը 2005 թ. նկարագրել է եզրիական համանուն սրբավայրը, որի աղոթատանը վավերացվել են մի քանի տասնյակ ճրագներ (նկ.3): Ըստ արշավախմբի՝ հավատացյալ եզրիները աղոթքի են գալիս այստեղ ճրագներով, վառում և թողնում են սրբարանում<sup>1</sup>:

Կարելի է ենթադրել, որ սրբավայրում ճրագ վառելը և այն այդտեղ թողնելը տարածված սովորույթ էր, ինչի վկայությունը Միրաքի եկեղեցու պեղումներով ի հայտ եկած ծիթաճրագների գտածոներն են:

**Рая Саргсян, Светильники, найденные во время раскопок церкви села Мирак,-В 2012 г. во время археологических раскопок церкви села Мирак открылись около двух десятков светильников. Цель данной статьи - представить наблюдения, связанные с ритуальным и прикладным значением светильников, на основе археологического и этнографического материала. Большое количество светильников в маленькой церкви, вероятно, связано с ритуалом дарения церкви светильника. Полевой материал о ритуальном применении светильников из сел Мирак и Меликгюх позволяет говорить о наличии такого ритуала. Интересно, что в обоих селах респонденты, не отмечая какого-либо источника, уверенно говорили, что большое количество светильников обусловлено зажжением в прошлом светильников в церкви вместо свечей. По их словам, зажженные светильники оставляли в церкви именно те, у кого в доме было более одного светильника, то есть они “отдавали свой свет церкви”. Хотя полевой материал подтверждает традицию дарения церкви светильников, археологический материал не дает возможности определить их датировку и прочие обстоятельства.**

**Ключевые слова:** Мирак, церковь, раскопки, хачкар, светильник, респонденты, полевой материал, ритуал дарения светильников.


**Raya Sargsyan, The oil-lamps discovered during the excavations of the Mirak Village Church,-Nearly twenty oil-lamps have been found during excavations in 2012 at the church of**

«սրբերին» երկրպագողները մոմավառության համար օգտագործում են սուրճի բաժակներ, փոքր պնակներ, պահածոների տուփեր:

<sup>1</sup> Այս տեղեկություններն ու լուսանկարը մեզ սիրով տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Համլետ Պետրոսյանին:

Mirak. The article presents observations related to the ritual and practical significance of oil-lamps, based on archaeological and ethnographical material. Such a great number of lamps discovered in a small church were probably related to the rite of offering lamps to the church. We collected field material from the villages Mirak and Melikgyugh in order to understand if any rite of this kind existed in the past, or perhaps even now? It should be noted that there was such quantity of lamps due to the old custom of lighting lamps instead of candles in the church. According to the narrators, those who had more than one lamp in their houses used to leave alight lamps in the church, i.e. “they gave their own lamp to the church”. The field material confirms the tradition of giving lamps to the church, nevertheless the archaeological sources do not enable us to clear matters of dating and other circumstances.

**Keywords:** Mirak, oil-lamp, excavations, church, narrators, field material, ritual of devoting oil-lamps.



Նկ. 1 Նկ. 2



Նկ. 3